

**ԱՆՆԱ ԴԱՆԻՔԵԿՅԱՆ**

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական և քրեական  
դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՇԱՌՔԻ ԱՌԱՐԿԱՅԻ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ**

Առևտրային կաշառքի հանցակազմը, որը նախատեսված է ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածով, նորամուծություն է հանդիսանում ետխորհրդային քրեական իրավունքում: Վերոհիշյալ նորմն ընդգրկում է երկու փոխկապակցված արարք՝ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալը (200-րդ հոդ. 1-ին մաս), ինչպես նաև նշված սուբյեկտների կողմից կաշառք ստանալը (200-րդ հոդ. 3-րդ մաս): ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը օբյեկտիվ կողմից բնութագրվում է որպես ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը կամ առաջարկելը կամ տրամադրելը՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար: Նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմը համապատասխանաբար արտահայտվում է վերոհիշյալ սուբյեկտների կողմից թվարկված նյութական արժեքները և այլ օգուտները նույն պայմաններով ստանալու կամ պահանջելու կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելու մեջ:

Առևտրային կաշառքի առարկան կազմող՝ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դիսպոզիցիայում թվարկված նյութական արժեքների ու այլ օգուտների բովանդակության բացահայտումը ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն, քանի որ դա հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչպես կաշառքը կարող է ներգործել կաշառվողի վարքագծի վրա, որպեսզի վերջինս կաշառատուի կամ նրան ներկայացնող անձի օգտին կատարի կամ չկատարի որոշակի գործողություն: Այսպես, առևտրային կաշառքը նախատեսող նորմը՝ գործող խմբագրությամբ, կաշառքի առարկա է համարում դրամը, գույքը, գույքի նկատմամբ իրավունքը, արժեթղթերը կամ այլ առավելություններ (նախկին խմբագրությամբ այն նկարագրվում էր որպես դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային բնույթի ծառայություններ):

Կաշառքի առարկա հանդիսացող նյութական արժեքների՝ դրամի, գույքի, արժեթղթերի հասկացությունն ու բովանդակությունը քրեական իրավունքի տեսությունում էական տարածայնություններ և վեճեր չի առաջացնում: Այսպես, կաշառքի առարկա հանդիսացող դրամը կարող է արտահայտված լինել ինչպես ՀՀ ազգային արժույթով, այնպես էլ արտարժույթով: Այդպիսին է հանդիսանում ցանկացած դրամանիշը, որը գտնվում է ֆինանսական շրջանառության մեջ կամ էլ, եթե հանվել կամ հանվում է շրջանառությունից, ապա ենթակա է փոխանակման: Ինչ վերաբերում է շրջանառությունից հանված դրամին, օրինակ՝ հին մետաղադրամներին, ապա վերջիններս դրամ չեն համարվում, սակայն որոշակի արժեք ներկայացնելու դեպքում կարող են դիտվել որպես այլ գույք: Արժեթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս (ՀՀ քաղ. օր.-ի 146-րդ հոդ.), նույնպես կարող են արտահայտված լինել ցանկացած արժույթով: ՀՀ քաղ. օր.-ի 8-րդ գլխի 2-րդ պարագրաֆի դրույթներին համապատասխան, արժեթղթերի տեսակներն են պարտատոմսը, չեկը, հասարակ կամ փոխանցելի մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, պահեստային վկայագիրը (երկակի կամ հասարակ) և այլն: Գույքը նույնպես կարող է լինել տարբեր՝ ինչպես անշարժ, այնպես էլ շարժական, որոնց թվին պատկանում են ցանկացած ֆիզիկապես շոշափելի նյութական բարիքները՝ իրերը, որոնք ունեն որոշակի արժեք: Դրանք կարող են լինել մարդկանց աշխատանքի արդյունք հանդիսացող կամ բնության կողմից ստեղծված առարկաներ, որոնք օգտագործվում են մարդկային կենսագործունեության մեջ և բավարարում այս կամ այն պահանջումները: Որպես առևտրային կաշառքի առարկա կարող են հանդես գալ տարբեր տեսակի ապրանքները, արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրանքը, նյութերը, դեղամիջոցները, սարքերը, սարքավորումները, մեխանիզմները, արժույթային արժեքները՝ թանկարժեք մետաղները, դրանց ջարդոնը, թանկարժեք քարերը, դրանցից պատրաստված զարդերը և այլ արտադրանքը,

www.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պերճանքի առարկաները, պատմական, գեղարվեստական կամ մշակութային արժեք ունեցող առարկաները, շենքերը, շինությունները, կառույցները, հողամասերը, տրանսպորտային միջոցները, նույնիսկ բույսերը և կենդանիները:

Ընդ որում՝ կաշառքի առարկա հանդիսացող նյութական արժեքների նկարագրությունը (մասնավորապես խոսքը վերաբերում է նյութականացված թաղանթ ունեցող առարկաներին) նախկին խմբագրությամբ, մեր կարծիքով, ավելի հաջող էր ներկայիս օրենսդրական ձևակերպման համեմատ: Սկզբնական խմբագրությամբ այն շարադրվում էր որպես «դրամ, արժեթղթեր, այլ գույք...», որը տրամաբանական էր՝ նկատի ունենալով, որ թե՛ դրամը և թե՛ արժեթղթերը համարվում են գույքի տեսակներ: Նկատի ունենալով, որ նշված կատեգորիան առաջնահերթ վերաբերում է քաղաքացիաիրավական ոլորտին, հետևաբար այն բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ իրավունքի տվյալ ճյուղի նորմերին: Այսպես, ՀՀ քաղ. օր.-ի 132-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, «գույք» հասկացությունը ընդգրկում է նաև դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները: ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի գործող խմբագրությամբ («դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր...») դրամը և արժեթղթերը առանձնացվում են գույքից և դրանցից յուրաքանչյուրը դիտվում է որպես ինքնուրույն կատեգորիա, որը հակասում է օրենքում ամրագրված «գույք» հասկացության իմաստին: Այդ իսկ պատճառաբանությամբ գտնում ենք, որ ավելի տրամաբանական կլիներ վերադառնալ 200-րդ հոդվածի նախկին խմբագրությանը՝ վերոհիշյալ մասով:

Մինչդեռ հարկ է նշել, որ առևտրային կաշառքի առարկայի նկարագրությունը նախկին խմբագրությամբ ուներ մի շարք թերություններ, այդ թվում՝ նշում չէր պարունակում գույքի նկատմամբ իրավունքների վերաբերյալ: Այնուհետև օրենսդրի հիշյալ բացթողումը շտկվել է, և ներկայիս խմբագրությամբ առևտրային կաշառքը նախատեսող նորմը դրա առարկայի տեսակների շարքին է դասում նաև գույքի նկատմամբ իրավունքը: Գույքի նկատմամբ իրավունք ասելով՝ պետք է հասկանալ ոչ միայն սեփականության իրավունքը, այլև ՀՀ քաղ. օր.-ի 170-րդ հոդվածով նախատեսված այլ գույքային իրավունքները (կառուցապատման, գույքի օգտագործման, սերվիտուտի, գրավի): Ընդ որում՝ ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածի իմաստով «գույքի նկատմամբ իրավունք» հասկացությունը ենթադրում է իրավագործությունների ավելի լայն շրջանակ, որը չի սահմանափակվում քաղ. օր.-ի վերոհիշյալ նորմով նախատեսված գույքային իրավունքներով: Այսպես, գույքի նկատմամբ իրավունք պետք է համարել նաև իրավաբանական փաստաթղթերում (լիազորագիր, կտակ և այլն) ամրագրված այլ իրա-

վունքները, օրինակ՝ դրամը կամ ապրանքա-նյութական արժեքները ստանալու, գույքը տնօրինելու, դրա հետ կապված գործարքներ կնքելու, իրավաբանական գործողություններ կատարելու, գույքը ժառանգելու և այլ իրավունքները, որոնց իրացման արդյունքում անձը ձեռք է բերում նյութական բովանդակությամբ որոշակի օգուտ: Վերոգրյալից բխում է, որ առևտրային կաշառք տալու կամ ստանալու դրսևորումները չեն սահմանափակվում այն դեպքերով, երբ կաշառքի առարկա հանդիսացող գույքը անմիջապես հանձնվում է կաշառվողի սեփականությանը, այլ հանցակազմը առկա կլինի նաև այն պարագաներում, երբ, օրինակ, համապատասխան գույքը տրվի վերջինիս օգտագործմանը և կամ տիրապետմանը, նրա մոտ գրավ դրվի, հողամասը տրամադրվի կառուցապատման համար և այլն: Ինչ վերաբերում է անշարժ գույքի տեսքով հանդես եկող առևտրային կաշառքի առարկային, ապա բնականաբար այն կարող է տրամադրվել կաշառվողին միայն դրա նկատմամբ իրավունքը փոխանցելու միջոցով:

Անդրադառնալով ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածում նշված «այլ առավելություններ» տերմինին՝ պետք է նշել, որ դրա բովանդակության հարցն այնքան էլ միանշանակ չէ: Ինչպես նշվել է, նախկին խմբագրությամբ առևտրային կաշառքը նախատեսող նորմը՝ դրամից, գույքից և արժեթղթերից բացի, կաշառքի առարկայի հասկացության մեջ ընդգրկում էր նաև գույքային բնույթի ծառայությունները: Տրամաբանորեն գույքային բնույթի ծառայությունները պետք է դասվեն ՀՀ քր. օր.-ի 200-րդ հոդվածում նշված առավելությունների թվին: Սակայն, «այլ առավելություններ» հասկացությունը ավելի լայն է, քան գույքային բնույթի ծառայությունները, և վերջիններից բացի՝ ընդգրկում նաև այդպիսիք չհամարվող այլ օգուտները: «Գույքային բնույթի ծառայություն» հասկացությունը բացահայտելու համար հարկ է անդրադառնալ քաղաքացիական իրավունքի նորմերին: Քաղաքացիական իրավունքում ծառայությունը բնութագրվում է որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց ձեռնարկատիրական գործունեություն, որը ուղղված է այլ անձանց պահանջումների բավարարմանը: Ծառայությունները կարող են վերաբերել մարդկային գործունեության տարբեր ոլորտներին. դրանց տեսակները բազմազան են: Այսպես, ՀՀ քաղ. օր.-ի 777-րդ հոդվածի համաձայն՝ վճարովի ծառայությունների թվին դասվում են, օրինակ, կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայությունները: Բացի այդ ՀՀ քաղ. օր.-ի 7-րդ բաժնի 5-րդ ենթաբաժնի համաձայն՝ այդպիսիք են հանդիսանում նաև հանձնարարությունը, կոմիսիան, գործակալությունը, պահատվությունը, փոխադրումը, տրանսպորտային առա-

քումը, փոխառությունը, վարկը, ֆակտորինգը, ֆրանչայզինգը և այլն:

Քրեական իրավունքի տեսությունում տվյալ հասկացությունը բնորոշվում է ոչ միանման: Այսպես, Վ. Ս. Բուրովը գույքային բնույթի ծառայություններ է համարում ծառայությունները, որոնք կապված են նյութական բարիքների ձեռքբերման և կամ սպառման հետ<sup>2</sup>: Համաձայն չենք նման բնորոշմանը, քանի որ ծառայությունը կայանում է որոշակի գործողություններ կատարելու մեջ, որոնք ոչ միշտ կարող են նյութականացված արտահայտություն ունենալ: Քաղաքացիական իրավունքի տեսությունում, նայած մատուցված ծառայությունների արդյունքին, դրանք դասակարգվում են նյութական և ոչ նյութական ծառայությունների: Վերջիններս բնութագրվում են նրանով, որ ծառայություն մատուցողի գործունեությունն առարկայական տեսք չի ստանում, ինչպես նաև ծառայություն մատուցողը չի երաշխավորում ենթադրվող դրական արդյունքին հասնելը<sup>3</sup> (օրինակ՝ բժշկական կամ խորհրդատվական ծառայությունները): Այլ հեղինակների կողմից գույքային բնույթի ծառայությունները բնորոշվում են որպես գործողությունների կատարում կամ որոշակի գործունեության իրականացում՝ անկախ դրա նյութական արդյունքի առկայությունից, որոնք ենթակա են գույքային (արժեքային) գնահատման՝ դրամային փոխարժեքով, սովորաբար մատուցվում են հատուցելի հիմունքներով և չեն կրում անձնական բնույթ<sup>4</sup>, որպիսի բնորոշումը, մեր կարծիքով, ավելի հաջող է:

Պ. Ս. Յանին որպես ծառայություն է դիտարկում առևտրային կամ այլ կազմակերպությունում կառավարչական գործառնություններն իրականացնող անձի օգտին կատարված ցանկացած գործողություն, բացառությամբ վերջինիս որպես կաշառքի առարկա գույք հանձնելու դեպքերի: Միաժամանակ հեղինակը շեշտում է այդպիսի գործողությունների գույքային բնույթը՝ որպես օրինակ նշելով որևէ ծառայություն նվազեցված գնով ստանալը այն դեպքում երբ սովորական պայմաններում, եթե կաշառումը տեղի չունենար, ծառայողի ծախսերը ավելի մեծ կլինեին: Ըստ հեղինակի դիրքորոշման՝ գոյություն ունեն նաև այնպիսի ծառայություններ, որոնք թեև չեն կարող ունենալ գնային արտահայտություն, սակայն արդյունքում հանգեցնում են ծառայողի հարստացմանը (օրինակ՝ ավելի բարձր վարձատրվող աշխատանքի տեղավորելը), և այդ իսկ պատճառով հանդիսանում են գույքային բնույթի ծառայություններ: Սակայն, Պ. Ս. Յանիի կարծիքով, կաշառվողի համար ավելի հետաքրքիր կամ հեղինակավոր աշխատանքի ընդունվելուն աջակցելը, եթե նրա աշխատավարձը չի ավելանում, չի կարելի դասել գույքային բնույթի ծառայություններին<sup>5</sup>: Նման տեսակետը վիճելի է թվում, քանի որ, մեր համոզմամբ, գույքային բնույթը բոլոր դեպքե-

րում պետք է ենթադրի դրամային փոխարժեքով գնահատման հնարավորություն: Ինչ վերաբերում է աշխատանքի ընդունմանն աջակցելուն, ապա դա չի կարող դիտվել որպես կաշառքի առարկա, քանի որ դա ենթադրում է հատուցելի հիմունքներով աշխատանքային պայմանագրի հիման վրա որոշակի աշխատանքի իրականացում: Այսինքն՝ նկատի ունենալով, որ տվյալ դեպքում անձը դրամական հատուցում կստանա իր կողմից կատարվող աշխատանքի դիմաց՝ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրի պայմանների համաձայն (այլ ոչ թե կաշառողի կամ նրա ներկայացված անձի օգտին որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու համար), ուստի բացակայում է վարձատրության ապօրինության հատկանիշը, քանի որ աշխատողին վճարվող աշխատավարձը չի կարող հավասարեցվել ապօրինաբար գույքային օգուտ տրամադրելուն (ստանալուն): Այլ է իրավիճակը, եթե անձի հետ կնքվում է այսպես կոչված «ֆիկտիվ» (կեղծ) աշխատանքային պայմանագիր, որի հիման վրա վերջինս ձևակերպվում է որպես տվյալ կազմակերպության աշխատող, սակայն իրականում վարձատրություն է ստանում առանց որևէ աշխատանք կատարելու, այսինքն՝ անհիմն: Տվյալ դեպքում իրոք առկա կլինի ապօրինաբար տրամադրված գույքային օգուտ, որը անձը ձեռք է բերում առանց օրենքի, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերով: Ապօրինի գույքային օգուտ ձեռք բերելը իր էության մոտ է անհիմն հարստացման քաղաքացիաիրավական ինստիտուտին, որը ըստ ՀՀ քաղ. օր.-ի 1092-րդ հոդվածի դրույթների՝ դրսևորվում է որպես առանց օրենքի, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին գույք ձեռք բերել կամ խնայել: Մինչդեռ, համեմատելով իրավունքի տարբեր ճյուղերին վերաբերող տվյալ ինստիտուտները, պետք է նշել, որ ի տարբերություն անհիմն հարստացման՝ կաշառողի կողմից կաշառվողին ապօրինաբար համապատասխան օգուտ տրամադրելու դեպքում առկա չէ տուժողը, քանի որ կաշառատուն չի կարող այդպիսին համարվել:

Բոլոր դեպքերում գույքային բնույթի ծառայությունները ենթադրում են ոչ միայն համապատասխան ծառայողի պահանջմունքների բավարարմանն ուղղված և որոշակի գնային արտահայտություն ունեցող գործողությունները կաշառողի կողմից անձամբ կատարելը, այլև երրորդ անձանց կողմից կաշառվողի օգտին կատարվող այդպիսի գործողությունները (գործունեությունը) վճարելը: Այսպես, տառացի մեկնաբանությամբ գույքային բնույթի ծառայության տեսքով հանդես եկող կաշառքի առարկա պետք է դիտվի կաշառվողի օգտին այնպիսի ծառայություն անհատույց մատուցելը, որը համապատասխան ծառայությունների շուկա-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

յում ունի դրամային արտահայտությամբ գնահատվող որոշակի արժեք և քաղաքացիաիրավական շրջանառության սովորական պայմաններում մատուցվում է վճարովի հիմունքներով, ինչպես նաև այն ոչ համարժեք, չնչին վճարի դիմաց մատուցելը կամ կաշառվողի օգտին այլ անձանց կողմից մատուցվող ծառայությունները վճարելը: Սակայն, քրեական իրավունքի տեսությունում «գույքային բնույթի ծառայություններ» հասկացությունը մեկնաբանվում է ավելի լայն իմաստով, քան քաղաքացիական իրավունքում: Այսպես, դրանց թվին է դասվում նաև տարբեր տեսակի աշխատանքների կատարումը, որոնք քաղաքացիական օրենսդրության տեսակետից չեն նույնացվում ծառայությունների հետ (մասնավորապես՝ կապալը): Բացի այդ՝ քրեական իրավունքի տեսանկյունից որպես այդպիսին են դիտվում նաև տարբեր գույքային օգուտները (օրինակ՝ սեփականացնող օբյեկտների կամ օտարվող գույքի արժեքը կամ տրամադրվող վարկի տոկոսադրույքը նվազեցնելը, ոչ համարժեք ապրանքների փոխանակությունը, կաշառվողի փոխարեն պարտավորություն կատարելը, նրան նյութական ծախսերից ազատելը և այլն), որոնք չեն ընդգրկվում «ծառայություն» բուն հասկացության մեջ: Այսպես, Ռ.Գ. Գերագույն դատարանի Պլենումը «Կաշառակերության և առևտրային կաշառքի վերաբերյալ գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 6 առ 10.02.2000թ. որոշմամբ պարզաբանել է, որ գույքային բնույթի ծառայություններ և այլ գույքային իրավունքների տրամադրում ասելով պետք է հասկանալ նյութական բովանդակությամբ օգուտները՝ մասնավորապես, օտարվող գույքի, սեփականացնող օբյեկտների արժեքի նվազեցումը, վարձավճարների, ինչպես նաև բանկի կողմից տրվող վարկերի տոկոսադրույքների նվազեցումը, անհատույց մատուցվող, սակայն վճարման ենթակա ծառայությունները՝ տուրիստական ուղեգրեր տրամադրելը, բնակարան վերանորոգելը, ամառանոց կառուցելը և այլն: Նշված օգուտները դատավճռում պետք է ստանան դրամական գնահատում: Այդպիսի ծառայությունների թվին կարելի է դասել՝ օրինակ, հյուրանոցային ծառայությունները, ավտոմեքենայի վերանորոգումը, անվճար ուսուցումը վճարովի ԲՈՒՀ-ում և այլն: Անհրաժեշտ է, որ դա կրի գույքային բնույթ և լինի ապօրինի, այսինքն՝ նախատեսված չլինի աշխատանքային պայմանագրի կամ այլ պայմանագրի պայմաններով:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի ներկայիս խմբագրությամբ ամրագրված «այլ առավելություններ» հասկացությանը, սպա, ինչպես արդեն նշվել է, այն ենթադրում է տարատեսակ օգուտների ավելի լայն շրջանակ, քան գույքային բնույթի ծառայությունները, թեև, մեր կարծիքով, նույնպես գուրկ չէ թերություններից: Այսպես, քրեական իրավունքի տեսությունում վեճե-

րի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք առևտրային կաշառքի առարկա կարող են դիտվել նաև գույքային բնույթ չունեցող բարիքները, այսինքն՝ ոչ նյութական պահանջմունքների բավարարմանն ուղղված և գույքային օգուտ ստանալուն շահագեցնող գործողությունների կատարումը կամ գործունեության իրականացումը, օրինակ՝ ծառայողական առաջխաղացումը, պատվոգրով կամ շնորհակալագրով պարգևատրելը կամ պարգևատրման ներկայացնելը, դրական շեղենգիա կամ հոդված գրելը: Որոշ հեղինակները գտնում են, որ ոչ նյութական բարիքները նույնպես կարող են համարվել կաշառքի առարկա, եթե դրանք կաշառվողի համար որոշակի արժեք են ներկայացնում: Օրինակ՝ Ա. Կ. Կվիցինիայի կարծիքով «կաշառքի առարկա կարող է լինել այն ամենը, ինչով կարելի է կաշառել պաշտոնատար անձին և նրա վրա ազդեցություն գործել ցանկացած բարիքների, ծառայությունների տրամադրման ճանապարհով՝ անկախ նրանից, թե դրանք ունեն նյութական, թե ոչ նյութական հատկություններ»<sup>8</sup>: Մինչդեռ քրեագետների մեծամասնությունը դեմ է մման տեսակետին, գտնելով, որ ոչ նյութական արժեքները չեն կարող դիտվել որպես կաշառքի առարկա: Համամիտ ենք նշված կարծիքին և միանում ենք քրեական իրավունքի տեսությունում ավանդական դարձած դիրքորոշմանը, ըստ որի՝ ուսումնասիրվող արարքը համարվում է շահադիտական հանցագործություն: Հետևաբար, ոչ նյութական բնույթ կրող բարիքների դիմաց որոշակի գործողություն (անգործություն) կատարելը որպես առևտրային կաշառք որակելը, մեր համոզմամբ, կհանգեցնի տվյալ հանցագործությունների շրջանակի չարդարացված ընդլայնմանը՝ դրանց թվին վերագրելով նաև անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով կատարված արարքները: Այդ կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ օրենսդրի կողմից օգտագործված «այլ առավելություններ» տերմինը անորոշ է և ստույգ չի արտացոլում կաշառքի առարկա հանդիսացող արժեքների բնույթը: Այսպես, նկատի ունենալով տվյալ արտահայտության անորոշությունը, լիովին պարզ չէ, թե արդյո՞ք այդպիսի առավելությունների շարքին կարելի է դասել միայն գույքային, թե նաև ոչ գույքային բնույթի բարիքները: Ինչպես արդեն նշվել է, կաշառքի առարկա կարող են համարվել միայն այնպիսի օգուտները, որոնք ենթակա են գույքային (արժեքային) գնահատման՝ դրամային փոխարժեքով: Գտնում ենք, որ տվյալ դեպքում ուսումնասիրվող նորմը կիրառելիս հնարավոր սխալներից խուսափելու նպատակով ավելի նպատակահարմար կլիներ հստակեցնել առևտրային կաշառքի առարկայի հասկացության մեջ մտնող «այլ առավելությունների» բնույթը՝ դրա փոխարեն օգտագործելով «գույքային բնույթի որևէ այլ օգուտ» արտահայտությունը: Մեր կարծիքով, վերոհիշյալ ձևակերպումը ավելի ճիշտ է

բնորոշում կաշառքի առարկա կազմող, առարկայական տեսք չունեցող արժեքները և հետևաբար ավելի պարզ է արտացոլում ուսումնասիրվող հանցագործության էությունը, որը կայանում է դրա շահադիտական բնույթի մեջ:

Որոշ հեղինակների, այդ թվում՝ Ս. Վ. Իգոսիմովի կարծիքով, առևտրային կաշառքի առարկան չի ընդգրկում գույքային բնույթի բոլոր օգուտները, օրինակ՝ պարտքը պահանջելուց հրաժարվելը և այլն: Ըստ նշված մտածման՝ այդպիսին չեն կարող համարվել նաև ոչ գույքային բնույթի ծառայությունները, օրինակ՝ ղեկավարի բարեհաճ վերաբերմունքը, դրական բնութագիր տալը կամ դրական գնահատական պարունակող հոդված մամուլում հրապարակելը<sup>10</sup>: Այսպես, տվյալ տեսակետի հետ համամիտ ենք միայն մասնակի՝ ոչ գույքային բնույթի բարիքները կաշառքի առարկայի հասկացության մեջ չընդգրկելու մասով, որի մասին արդեն նշվել է: Ինչ վերաբերում է պարտքը պահանջելուց հրաժարվելուն, ինչպես նաև համապատասխան ծառայողին նյութական ծախսերից ազատելու այլ դեպքերին, օրինակ՝ կաշառվողի փոխարեն գույքային պարտավորությունը կատարելուն, ապա, մեր կարծիքով, դա նույնպես պետք է համարել կաշառքի առարկա՝ նկատի ունենալով, որ դրա արդյունքում կաշառվողը անհիմն ձեռք է բերում այնպիսի գույքային օգուտ, որը հնարավոր է գնահատել դրամային փոխարժեքով:

Քրեական իրավունքի տեսությունում վիճելի է հանդիսանում այն հարցը, թե հնարավոր է արդյոք առևտրային կաշառքի առարկայի հասկացությանը վերագրել նաև մտավոր սեփականության օբյեկտները և դրանց նկատմամբ իրավունքները: Մեր կարծիքով, այդ հարցին պետք է դրական պատասխանել, եթե նշված օբյեկտներն ու իրավունքները ենթադրում են գույքային գնահատման հնարավորություն: Այսպես, ըստ ՀՀ քաղ. օր.-ի 1100-րդ հոդվածի, մտավոր սեփականության օբյեկտներ են հանդիսանում մտավոր գործունեության արդյունքները (գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները, գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, սելեկցիոն նվաճումները, չբացահայտված տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու) և այլն) և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները (ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, սպասարկման նշանները և այլն): ՀՀ քաղ. օր.-ի 1102-րդ հոդվածը մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքները դասակարգում է անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների: Ընդ որում՝ ըստ նշված հոդվածի դրույթների՝ անձնական ոչ գույքային իրավունքները հեղինակին են պատկանում անկախ նրա գույ-

քային իրավունքներից և պահպանվում են մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ նրա գույքային իրավունքներն այլ անձի անցնելիս: Ինչ վերաբերում է գույքային իրավունքներին, ապա ՀՀ քաղ. օր.-ի 1105-րդ հոդվածի համաձայն՝ դրանք կարող են այլ անձի փոխանցվել պայմանագրով (լիցենզային պայմանագիր) կամ իրավահաջորդության կարգով: ՀՀ քաղ. օր.-ի 1106-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ լիցենզային պայմանագիրը ենթադրվում է հատուցելի: Այսպիսով, քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքի տրամադրումը իրականացվում է վճարովի հիմունքներով: Բացի այդ՝ անձը, որին տրամադրվում է մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունք (լիցենզառու), լիցենզային պայմանագրով նախատեսված դեպքերում կարող է այդ իրավունքը տրամադրել այլ անձի՝ կնքելով ենթալիցենզային պայմանագիր, որը նույնպես ենթադրում է լիցենզառուի կողմից որոշակի վարձատրություն ստանալը: Հետևաբար, անհատույց կամ ոչ համարժեք հատուցմամբ կաշառվողին այդպիսի իրավունք տրամադրելը, ինչպես նաև այդ իրավունքն այլ անձանց վճարի դիմաց տրամադրելու հնարավորություն ընձեռելը համապատասխանում է կաշառքի առարկայի հատկանիշներին, քանի որ կարող է ստանալ գույքային գնահատական:

Այսպիսով, մեր համոզմամբ, առևտրային կաշառքի առարկա կարող է հանդիսանալ նյութական կրիչի վրա արտացոլված մտավոր գործունեության արդյունքը, որը օժտված է իրային հատկանիշներով և ունի որոշակի արժեք (ձեռագիրը, էսքիզը), ինչպես նաև մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ գույքային իրավունքները, որոնք կարող են գնահատվել դրամային փոխարժեքով: Նույն չափանիշների հիման վրա որպես առևտրային կաշառքի առարկա պետք է գնահատել նաև այն տեղեկատվությունը, որն ունի որոշակի առևտրային արժեք:

Ամփոփելով վերոգրյալը՝ առևտրային կաշառքի առարկան ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես կաշառողի կողմից կաշառվողի պահանջմունքների բավարարման համար անհատույց կամ ոչ համարժեք հատուցմամբ ստեղծվող այնպիսի պայմաններ, որոնք հանգեցնում են վերջինիս կամ այլ անձի կողմից անհիմն, այսինքն՝ առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով նախատեսված հիմքերի որոշակի եկամուտ ստանալուն կամ ծախսերից ազատվելուն կամ դրա իրական հնարավորությունը ձեռք բերելուն, եթե այդպիսի արդյունքը դրամային փոխարժեքով լեզալ գույքային գնահատման հնարավորություն է ընձեռում:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս: Խմբագրությամբ պրոֆ. Ռ.Գ. Պետրոսյանի և պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2001, էջ 297

<sup>2</sup> Տե՛ս Буров В.С. Преступления против интересов службы в коммерческих и иных организациях. Комментарий законодательства и справочные материалы. Ростов-на-Дону, 1997, С. 167

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս: Խմբագրությամբ պրոֆ. Ռ.Գ. Պետրոսյանի և պրոֆ. Գ.Հ. Ղարախանյանի: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2001, էջեր 297-298

<sup>4</sup> Տե՛ս Уголовное право. Особенная часть. Под. общ. ред. В.П. Ревина. М., 1998, С. 329

<sup>5</sup> Տե՛ս Яни П.С. Экономические и служебные преступления. М., 1997, С. 119

<sup>6</sup> Տե՛ս Документы Верховного суда Российской Федерации. Бюллетень Верховного суда Российской Федерации. Бюллетень N 6 2000 года. <http://www.supcourt.ru/second.php>

<sup>7</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Расширенный уголовно-правовой анализ/ Под общ. ред. В.В. Мозякова.- М.: Экзамен, 2002, С. 464: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. В.И. Радченко. М., Вердикт, 1996, С. 350: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный). - 3-е изд., испр., доп. и перераб. (под ред. доктора юридических наук, профессора Чучаева А.И.). - «Юридическая фирма «КОНТРАКТ», 2011, С. 204, Система «ГАРАНТ», [www.garant.ru](http://www.garant.ru), <http://base.garant.ru/59694556/>, <http://www.twirpx.com/file/663610/>

<sup>8</sup> Տե՛ս Квициния А.К. Должностные преступления. М., 1992, С. 132

<sup>9</sup> Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. В.И. Радченко. М., Вердикт, 1996, С. 521. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. А.И. Бойко. Ростов-на-Дону, 1996, С. 440

<sup>10</sup> Տե՛ս Изосимов С.В. Преступления против интересов службы в коммерческих и иных организациях (уголовно-правовой анализ). СПб, 1997, С. 133-134: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (отв. ред. А.А. Чекалин; под ред. Томина В.Т., Сверчкова В.В.). - 3-е изд., перераб. и доп. - Юрайт-Издат, 2006, С. 204, [http://www.pravo.vuzlib.net/book\\_z1876\\_page\\_34.html](http://www.pravo.vuzlib.net/book_z1876_page_34.html): Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. Отв. ред. Чекалин А.А., под ред. Томина В.Т., Сверчкова В.В. 4-е изд., перераб. и доп. - «Юрайт-Издат», 2007, С. 204, <http://do.gendocs.ru/docs/index-181420.html?page=37>: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (под ред. Томина В.Т., Сверчкова В.В.). - 6-е изд., перераб. и доп. - «Юрайт-Издат», 2010, С. 204, Система «ГАРАНТ», [www.garant.ru](http://www.garant.ru), <http://base.garant.ru/5750333/>

## РЕЗЮМЕ

### *Правовые вопросы предмета коммерческого подкупа*

В настоящей статье рассматриваются проблемы и правовые вопросы предмета коммерческого подкупа. В статье описываются и анализируются признаки благ, составляющих понятие предмета коммерческого подкупа, перечисленных в статье 200 Уголовного кодекса Республики Армения, предусматривающей ответственность за указанное преступление, на основании чего определяется общая характеристика предмета коммерческого подкупа. Статья содержит анализ сложившихся в теории уголовного права мнений и позиций, высказанных разными авторами относительно данного вопроса. В статье затрагиваются также вопросы совершенствования законодательного определения предмета коммерческого подкупа.

## SUMMARY

### *The legal issues of subject of commercial bribery*

This article deals with the problems and legal issues of subject of commercial bribery. The article describes and analyzes the characteristics of goods that make up the concept of subject of commercial bribery referred to in Article 200 of the Criminal Code of Republic of Armenia, providing for responsibility for the crime on the basis of which general characterization of the subject of commercial bribery is determined. This article contains analysis of prevailing in theory of criminal law views and positions, expressed by different authors on this issue. The article also addressed the issues of improvement the legislative definition of the subject of commercial bribery.